

**ԱՐՑԱԽՅԱՆ ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արմեն Սարգսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրՊՀ

Ավանդությունները էպիկական ժանրի ժողովրդական ստեղծագործություններ են, որոնք ստուգաբանում, բացատրում, ներկայացնում են անցյալում եղած և տեղի ունեցած իրերն ու դեմքերը, դեպքերն ու երևույթները: Դրանց շնորհիվ հարազատ ժողովրդի և բնաշխարհի առանձնահատկությունները, հնում տեղի ունեցած պատմական դեպքերը, ներքին և արտաքին շփումներն ու փոխհարաբերություններն արտացոլող պատմությունները փոխանցվում են սերնդեսերունդ՝ նպաստելով ժողովրդի պատմական գիտակցության ձևավորմանն ու ինքնության հարատևմանը:

Արցախյան բանահյուսության մեջ ուրույն տեղ ունեն ավանդությունները: Ժողովրդական նման ստեղծագործություններ են ընդգրկված Ս. Ջալալյանցի «*Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*» (մասն 1, 1842 թ., մասն 2, 1858 թ.), Ս. Բարխուդարյանի «*Արցախ*» (1885 թ.), «*Աղվանից աշխարհը և դրացիք*» (1893 թ.), Լեոյի «*Ուխտավորի հիշատակարանը*» (1885 թ.), «*Իմ հիշատակարանը*» (1890 թ.), Բաֆֆու «*Խամսայի մելիքությունները*» (1895 թ.), Ե. Լալայանի «*Վարանդա*» (Ազգագրական հանդես, Բ գիրք, 1897թ.) գործերում, *ИКОГО*-ի և *СМОМПК*-ի տարբեր հատորներում, ինչպես նաև մի շարք ձեռագրերում: Սրանցից առանձնապես արժեքավոր է Ե. Լալայանի «*Վարանդա*» աշխատությունը, որտեղ ազգագրական նյութերի հետ ներկայացվում են Արցախի տարբեր գյուղերից գրառված տասնյակ ավանդություններ: Նշված բոլոր այս ստեղծագործություններն զետեղված են Ա. Ղանալանյանի «*Ավանդապատում*» (1969 թ.) ժողովածուի մեջ: Արցախյան ավանդությունների գրառմանը և հրատարակմանը լուրջ ուշադրություն է դարձվել նաև հետագայում: Հիշատակության արժանի են Մ. Գրիգորյան-Սպանդարյանի «*Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը*» (1971 թ.), Մ. Առաքելյանի և Ռ. Ղահրամանյանի «*Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից*» (1978 թ.), Ս. Լիսիցյանի «*Լեռնային Ղարաբաղի հայերը*» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.12, 1981թ.) Ա. Ղազիյանի «*Արցախ*» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983թ.), Լ. Հարությունյանի «*Նշխարներ Արցախի բանահյուսության*» (1991 թ.) ժողովածուները, որտեղ բանահյուսական այլ ժանրերի հետ տեղ են գտել բազմաթիվ հիմնականում մինչև այդ չգրառված ավանդություններ, իսկ Ա.Սարգսյանի

«Արցախյան ավանդություններ» ժողովածուն (2007 թ.) ընդգրկում է 266 ավանդություն և ավանդագրույց՝ 55 տարբերակներով, որոնցից 244-ը մինչև այդ գրավոր ձևով չէին ավանդվել:

Մեծ են ավանդությունների աղբյուրները ժողովրդական բանահյուսության այլ, հատկապես էպիկական ժանրի մյուս ստեղծագործությունների հետ: Եվ պատահական չէ, որ ժամանակի ընթացքում տեղի են ունեցել փոխանցումներ դրանց միջև, ինչը հիմք է տվել որոշ գիտնականների՝ ավանդությունները նույնացնել այլ ժանրերի հետ¹: Այսպես. Տունի գյուղի **Պրորզվալենջ** տեղանքի մասին պատմվող ավանդությունը² բանագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև որպես հեքիաթ³: Գիշերվա և ցերեկվա հաջորդականությունը բնորոշող ավանդությունը⁴ հանդես է գալիս «Սինան քաքավեր» հեքիաթի մեջ⁵ և նույնիսկ գործածվում որպես հանելուկ (**Սին պառավ կրնէ՞՞ ըրորչկին մին սը՛վ, մին սիպտակ կրծէ՞՞, մինը կրզկում ա, մինը՝ յ՛՛տ տամ**): Քիչ չէ նաև ավանդությունների վերածված անեկդոտների և գրույցների թիվը: Այսօր էլ արցախյան գոյամարտի հերոսների մասին հյուսվում են զանազան իրական և չափազանցված պատմություններ, որոնք, անշուշտ, տասնյակ տարիներ հետո կստանան ավանդության արժեք: Որոշ ավանդություններ էլ ժամանակի ընթացքում դարձել են առած-ասացվածքներ, դարձվածներ, օրինանքներ, անեծքներ՝ իրենց մեջ խտացնելով հարազատ ժողովրդի իմաստությունն ու փիլիսոփայությունը: Այսքանով հանդերձ՝ ավանդություններն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է նրանց դերով, որը, ի տարբերություն մյուս ժանրերի, ոչ թե ունկնդիրների գեղարվեստական պահանջմունքների բավարարումն է, այլ նրանց համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ հաղորդելը⁶: Ավանդությունները ստեղծվում և պատմվում են հիմնականում իրենց նյութ դարձած դեմքերի ու դեպքերի, առարկաների ու վայրերի մոտակայքում: Եվ եթե այլ ժանրերի ստեղծագործությունների բանասացները պետք է ունենան համապատասխան բնատուր ձիրք, ապա ավանդախոսները տարբեր խավերի և տարիքի սովորական մարդիկ են, որոնք երբևէ իրենց լսածն ու տեսածը հաղորդում են խոսակիցներին: Յուրահատուկ է նաև ավանդությունների կառուցվածքն ու ձևը: Դրանց հատուկ է կարճ, պատմողական խոսքը, որը

¹ Ա. Ղանալանյան, *Ավանդապատում*, 1969, էջ ժԵ-ԻԲ:

² Ա.Սարգսյան, *Արցախյան ավանդություններ*, 2007, էջ 39:

³ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, 1966, էջ 675:

⁴ Ա.Սարգսյան, *Նշվ. աշխ.*, էջ 16:

⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, 1966, էջ 29:

⁶ Ա. Ղանալանյան, *Նշվ. աշխ.* էջ ԻԳ:

հազվադեպ է ուղեկցվում հարց ու պատասխանով, երկխոսություններով և գերծ է այլ ժանրերին հատուկ կայուն բանաձևերից: Ավանդությունների գեղարվեստական արժեքը հիմնականում պայմանավորված է նրանց սեղմ ոճով: Ընդամենը մի քանի նախադասությամբ ավանդախոսները պարզ ու հասկանալի լեզվով ներկայացնում են կյանքի մի պատկեր, որտեղ բավական հաջող բնութագրվում են արտաքին աշխարհն ու ժամանակը: Առավել մեծ է նման ստեղծագործությունների պատմական և ճանաչողական արժեքը: Հաճախ դրանք դառնում են հուսալի աղբյուր պատմագետների, բանագետների, հնագետների և ազգագրագետների համար՝ հնարավորություն ստեղծելով բացահայտելու հարազատ ժողովրդի պատմության, կենսակերպի, կենցաղի, աշխարհայացքի, հավատալիքների այս կամ այն առանձնահատկությունը, լրացնելով գրավոր աղբյուրների բացը, մեկնաբանելով տարբեր ժամանակաշրջաններում ժողովրդի վերաբերմունքն ու գնահատականը պատմական իրականության, դեպքերի ու դեմքերի նկատմամբ, նպաստելով անհետացած հասարակական որոշ երևույթների հայտնաբերմանը, նրանց ծագման ու զոյատևման հանգամանքների պարզաբանմանը: Դրան զուգընթաց բազմաթիվ ստեղծագործություններ, տարիներ ու դարեր շարունակ փոխանցվելով սերնդից սերունդ, կորցրել են իրենց հավաստիության արժեքը՝ աղավաղելով ստույգ ժամանակագրությունն ու պատմական փաստերը: Աղավաղումները հատկապես ակնառու են այն ստեղծագործություններում, որտեղ փորձ է արվում ստուգաբանել անձնանունները, տեղանունները, երևույթների ու առարկաների անունները: Ահա թե ինչու լեզվաբանները խիստ թերահավատությամբ են ընդունում նման փաստերը: Սակայն որոշ դեպքերում դրանք լեզվաբանական տեսակետից նույնպես կարող են արժեք ներկայացնել. օրինակ, Մարտունու շրջանի Սխտորաշեն (Սըխտուրաշեն) գյուղի անունը շատերը կապում են *սխտոր* բառի հետ, չնայած գյուղացիների վկայությամբ սխտորը այդ գյուղում լավ չի աճում: Մինչդեռ ավանդությունը պատմում է, որ այդ տեղանքը, շնորհիվ իր գեղեցիկ բնության, սառնորակ աղբյուրի և հանրահայտ սոսի ծառի, երկար ժամանակ եղել է Իրանի շահի անառանգը, որի պատճառով էլ կոչվել է *Շախ դուրան շեն* (շահի կանգնելու շեն), իսկ հետագայում՝ *Շըխտուրաշեն*¹, ինչը և ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է *սխտոր* բառի հետ՝ ստանալով ներկայիս ձևը: Նման ստուգաբանությունն արդեն լուրջ խորհրդածությունների տեղիք է տալիս:

¹ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 23:

Հիմք ընդունելով ավանդությունների էությունը՝ Ա.Ղանալանյանը դրանք բաժանում է երեք հիմնական տեսակների¹.

1. *Ստուգաբանական ավանդություններ*, որտեղ մեկնվում, ստուգաբանվում և իմաստավորվում են անհասկանալի բառերը:

2. *Բացատրական ավանդություններ*, որոնք ընդգրկում են երկնային և երկրային տարբեր մարմինների առաջացումը, կենդանիների ու բույսերի տարբեր հատկություններ, մարդկային ամենատարբեր հարաբերություններ, զանազան երևույթներ, սովորություններ, հավատալիքներ, հանգամանքներ:

3. *Վարքաբանական ավանդազրույցներ*, որտեղ կենսագրական տեղեկություններ և միջադեպեր են պատմվում իրական և մտացածին, հայտնի և անհայտ անհատների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Արցախյան բանահյուսության մեջ ըստ քանակի գերակշռում են ստուգաբանական ավանդությունները: Յուրաքանչյուր բնակիչ փորձում է ստուգաբանել իր բնակավայրի և շրջապատող առարկաների անունները՝ տալով հիմնականում տեղական, պատմական բացատրություն²: Քիչ չեն նաև բացատրական ստեղծագործությունները, իսկ վարքաբանական ավանդազրույցները զգալիորեն զիջում են այդ երկուսին: Որոշ ստեղծագործություններ էլ իրենց էությանը կարող են դասվել և՛ առաջին, և՛ երկրորդ խմբերի մեջ:

Ըստ բնույթի՝ ավանդությունները բանագիտության մեջ լինում են *ազգային, միջազգային և եկամուտ*³: Դրանց մեջ քանակով և պատմական ու ճանաչողական արժեքով գերակշռում են ազգայինները:

Արցախյան ազգային ավանդությունները սերտորեն կապված են Հայաստանի այլ վայրերի համանման ստեղծագործությունների հետ, որոնց միջից հառնում է հայի կերպարը՝ իր բնավորությամբ ու հոգեբանությամբ, կենցաղով, սոցիալ-տնտեսական հարաբերություններով, հավատալիքներով, սովորություններով՝ կապված հայրենի բնաշխարհի հետ: Թերևս այդ ստեղծագործությունների մեջ կարելի է առանձնացնել բուն արցախյանը, որոնք մեծամասամբ ստուգաբանական ավանդություններ են և մեկնաբանում են այն անուններն ու երևույթները, որոնք զործածական են միայն Արցախում: Այսպես. Մարտունու շրջանի Հաղորտի գյուղի մերձակայքում գտնվող *Փղթուշ ախպուրը* այդպես է կոչվում

¹ Ա. Ղանալանյան, *Նշվ. աշխ. էջ ԻԸ-ԻԹ*:

² Ա. Ղազիյան, *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973 թթ. գրառումների հիման վրա, Պատմաբանասիրական հանդես, N 3, 1974 թ., էջ 237*:

³ Ա. Ղանալանյան, *Նշվ. աշխ., էջ Լ-ԼԱ*:

այն օրվանից, երբ հովիվը ստիպված էր փոխել աղբյուրի հունը և նրա ակի մեջ բրդունը (*փըրթուշ*) պատրաստել¹:

Հաղորդի շրջանի *Տիգրափաղ* (*Դիգափայտ*) սարը իր անունը ստացել է այն ժամանակ, երբ կռապաշտների թագավորը հրամայել է քրիստոնեությունն ընդունած իր մերձավորներին փայտի նման դիզել և վառել²:

Շուշու շրջանի Բերդաձոր գյուղի մերձակայքում է գտնվում *Պարիմ պիժ* սրբավայրը, որտեղ թաղված է ժողովրդի մեջ տարածված հիվանդությունը կանխած անանուն մի բժիշկ: Քանի որ, չինանալով բժշկի անունը, բոլորը նրան կոչում էին բարի բժիշկ (պարի պըժիշկ), ուստի սրբավայրին էլ տվել են *Պարիմ պիժ* անունը³:

Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի բլուրներից մեկը կոչվում է *Հայրունց թունք*, քանի որ Իրանի Ղարաղաղի գավառից գաղթած Հայրունց ազգը սկզբնական շրջանում այս բլրի վրա է բնակություն հաստատել⁴:

Ասկերանի շրջանի Դահրազ և հարևան գյուղերում գործածական է *Դհիրըզլճու պէլի* դարձվածը, որով կոչում են ճաշկերույթի ժամանակ սեղանի մոտ կանգնած մարդկանց: Պարզվում է, որ առաջներում Դահրազ գյուղում հարսանյաց հանդեսի ողջ ընթացքում քավորը (*պէլիճ*) մնում էր կանգնած հարսանիքը ղեկավարելու համար⁵:

Արցախյան ավանդությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենի բնաշխարհն ու նրա հետ կապված հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները: Արցախում ևս ժամանակին մեծ հավատ կար ոգիների գոյության վերաբերյալ, որի մնացուկները առայսօր պահպանվում են: Ահա թե ինչու ոգեդիմացվել ու անձնավորվել են հայրենի լեռներն ու քարերը, ջրերը, բույսերն ու կենդանիները, առանց որոնց անհնար է արցախցու գոյությունը:

Լեռներից հատկապես պաշտամունքի առարկա են դարձել Քիրսը, Մռավն ու Դիգափայտը, որոնց վրա գտնվող ուխտատեղիները իրենց արտացոլումն են գտել մի շարք ավանդություններում: Այժմ էլ արցախցի կանայք, ձեռքերը կարկառելով դեպի այդ լեռները, խնդրում են կատարել իրենց իղձը՝ մեկին պահպանելու, երկար կյանք պարգևելու, փորձանքներից հեռու պահելու կամ պատժելու: Այսպես. չար կեսուրից ազատվելու համար թշվառ կինը խնդրում է Քիրսին իրեն քար դարձնել, որը և

¹ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 58:

² Նույն տեղը, էջ 36:

³ Նույն տեղը, էջ 55:

⁴ Նույն տեղը, էջ 42:

⁵ Նույն տեղը, էջ 85:

իսկույն կատարվում է¹, բաքվեցի հայ կինը հեռու-հեռվից դիմում է Դիզափայտին իր մահամերձ որդու կյանքը փրկելու խնդրանքով՝ խոստանալով մատաղ անել, և հիվանդը, որի մահը բժիշկները համարում էին անխուսափելի, կազդուրվում է², բնակիչները խնդրում են Մռավին՝ փրկելու իրենց Քափասից, որը, անչափ բարձրանալով, ստվերի տակ է թողել ողջ շրջակայքը: Մռավը լսում է խնդիրը և թրով ջարդում ըմբոստ լեռան գլուխը³:

Հայրենի լեռների հետ պաշտվում են նաև մի շարք քարեր և ժայռեր, որոնք դարձել են ուխտատեղիներ: Դրանց մոտ աղոթում են, մոմ վառում, մատաղ կտրում:

Հերիեր գյուղից վերև՝ լեռան լանջին, կա մի հսկա ժայռ, որի գլորման սարսափից գյուղացիները ստիպված են եղել տեղափոխվել ներքև և կառուցել նոր տներ⁴: Երկյուղը ստիպել է բնակիչներին պաշտել այդ ժայռը, որպեսզի չգլորվի և չավերի գյուղը:

Գյուլնե ճարտար գյուղում է գտնվում *Շմանեքը* երեք ժայռերից կազմված մի ամբողջություն, որոնց միջև կա երկու խորշ: Այդ խորշերով անց են կացնում կատաղած անասուններին, որպեսզի խելոքանան⁵:

Խնձրիստան գյուղի մոտ է գտնվում *Սուլուլ քարը*: Ավանդության համաձայն՝ դա քարացած մի կին է՝ երեխան գրկին, որը, ձգտելով ազատվել իրեն հետապնդող թշնամիներից, խնդրել է Աստծուն՝ իրեն քար դարձնել⁶: Մեկ այլ տարբերակի համաձայն՝ կինը բողբոջել է Աստծու դեմ դաժան ճակատագրի համար, որի պատճառով Աստված զայրացել և նրան քար է դարձրել⁷:

Առանձնակի պաշտամունքի առարկա են ծաքարերը, որոնցից իր գորությանը հայտնի է Խերխան գյուղի մերձակայքում գտնվողը: Այն հեռվից ծծկեր երեխային կերակրող կնոջ տեսք ունի, որի ծծերից կաթ-կաթ ջուր է հոսում: Սակավակաթ կանայք այդտեղ աղոթում են, մոմ վառում, այդ ջրից քսում իրենց կրծքերին, և կաթը իսկույն առատանում է: Ոմանց պատմելով՝ այստեղ ժամանակին ապրել է Խերխան թագավորի չքնաղ դուստրը՝ Ծովիկը, որը, չցանկանալով թշնամիների ձեռքն ընկնել, ինքնասպան է եղել: Չար թշնամիները կտրել են նրա ծծերը և դրել ժայռի վրա,

¹ Նույն տեղը, էջ 40:

² Նույն տեղը, էջ 36:

³ Նույն տեղը, էջ 41:

⁴ Ե. Լալայան, *Վարանդա, Ազգագրական հանդես, Բ գիրք, 1897թ., էջ 189*:

⁵ Նույն տեղը:

⁶ Ա.Սարգսյան, *Ոշվ. աշխ., էջ 45*:

⁷ Նույն տեղը:

որից Աստծու գործությամբ սկսել է կաթնաջուր հոսել¹: Մեկ այլ ավանդության համաձայն մի անխիղճ մայր այս ժառի մոտ արծակել է իր ծծկեր երեխային և փախել: Աստված ժայռին ծծեր ու կաթ տալու շնորհք է պարգևել, որ երեխան սովից չմեռնի²: Իսկ ոմանք էլ ասում են, որ այդ ժայռը ժամանակին չար կեսուրիից հալածված մի հարս է եղել, որը, այլևս չցանկանալով վերադառնալ կեսուրի մոտ, խնդրել է Քիրսին՝ իրեն քար դարձնել³:

Նման ծճաքարեր կան տարբեր գյուղերում:

Հայտնի են նաև մի շարք քարեր, որոնցից յուրաքանչյուրը պաշտվում է՝ որպես մի որոշ հիվանդության բժշկող: Որոշ քարեր էլ, թեև չեն պաշտվում, բայց հայտնի են իրենց շուրջը ստեղծված ավանդություններով:

Հաղորտի գյուղի մոտ գտնվող *Ավանա քարը* հայտնի է նրանով, որ այստեղ Ավան Յուզբաշին և Թարխան հարյուրապետը հաղթել են պարսիկներին՝ այս քարի վրա արձանագրելով հաղթանակի պատմությունը⁴:

Գտիչ բերդը և Թաղոտ գյուղը բաժանող ձորում կա մի հսկա քարակույտ՝ *Կուտած քարեր*, որը ըստ ավանդության՝ հավաքել են Բուդայի զինվորները՝ ցանկանալով ձորը լցնել քարերով և ճանապարհ բացել բերդը գրավելու համար⁵:

Նման մի քարակույտ էլ կա Աստղաշեն գյուղի մերձակայքում՝ անտառի մեջ, որ կոչվում է *Խոխտած*: Մի անգամ այստեղ մի հարս խեղդել է յուր սկեսրոջը: Սովորության համաձայն գնացող-եկողը երեք քար է նետում պառավի սպանված տեղը, որից և գոյացել է քարաբլուրը⁶:

Արցախում մնում են նաև ջրի պաշտամունքի մնացուկները. մի քանի աղբյուրներ, սուրբ համարվելով, շարունակում են մնալ հիվանդությունների բժշկող: Դրանցից մի քանիսը ամենայն տեսակ, իսկ մյուսները միայն որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում: Մինչև այժմ էլ պաշտվում է Գյումե ճարտարի *Դավաչիչազ ախպուրը*, որը համարվում է մոլոքոր հիվանդության բժշկող: Հիվանդները, ինչպես հնում, աղբյուրի առջև մոմ են վառում, աղոթում և լողանում կամ լվացվում ժայռի մեջ փորված ջրափոսի մեջ: Նրանց համար, ովքեր ի վիճակի չեն բարձրանալ աղբյուրի մոտ, ջուր են տանում, սակայն այդ

¹ Ա. Ղազիյան, Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983, էջ 150:

² Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 40:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը, էջ 40:

⁵ Նույն տեղը, էջ 38:

⁶ Նույն տեղը, էջ 46:

դեպքում չպետք է հետ նայել կամ ջրի ամանը գետնին դնել, այլապես ջուրը կկորցնի գորությունը:

Որպես ամեն տեսակի հիվանդությունների բժշկող՝ հայտնի է Հաղորտի գյուղի **Ջրրավուր ախպուրը**, որին այցելելով՝ հիվանդները այդ ջրից խմում և քսում են իրենց մարմնին ու կազդուրվում¹:

Դիզափայտ լեռան ստորոտի գյուղերում մեծ համբավ ունի լեռան վրա գտնվող **Արջին ախպուրը**: Ավանդությունը², ըստ որի՝ աղբյուրը բխել է ծարավից տոչորվող արջի՝ երկնքին ուղղված խնդրանքի արդյունքում, հիմա էլ պատմվում է այդ գյուղերում: Պաշտվում է նաև աղբյուրից վերև գտնվող քարայրը, որտեղ կայծակը խոցել է արջին:

Բազմաթիվ են այն աղբյուրները, որոնք չեն պաշտվում, բայց նրանց մասին հյուսվել են գեղեցիկ ավանդություններ: Գողտրիկ մի պատմություն է Խաչմաչ գյուղի **Կույր ախպուրի** մասին պատմվող դեպքը. Ջուր վիշապը կուլ է տալիս ջրի եկած աղջկան: Նրա մահը սգում է սիրած տղան և անիծում.

- *Չորանանս, աղբյուր, կուրանանս, աղբյուր*, - ինչը և կատարվում է³:

Մյուս տարբերակի համաձայն՝ երիտասարդ հովիվը մորթազերծ է անում մի կով և կաշվով փակում վարար աղբյուրի հունը, որպեսզի կարողանա հանել սիրած աղջկա դիակը, բայց ինքն էլ խորտակվում է: Հետագայում, երբ ժողովուրդը բացում է աղբյուրի հունը, այն արդեն ցամաքած (կուրացած) էր⁴: Մեկ այլ վարկած էլ պատմում է, որ այստեղ խեղդվել է կռապաշների առաջնորդի աղջիկը: Կատաղած առաջնորդը հրամայել է քարերով լցնել աղբյուրը և կուրացնել⁵:

Հացի գյուղում է գտնվում **Անահիտին ախպուրը**: Ժողովրդի պատմելով՝ այս աղբյուրի մոտ է Վաչագան թագավորը առաջին անգամ հանդիպել իր ապագա կնոջը՝ Անահիտին⁶: Նույն ավանդությունը պատմվում է նաև Չլդրան գյուղի մերձակայքում գտնվող համանուն աղբյուրի մասին:

Հետաքրքիր է Կաղարծի գյուղի տարածքում գտնվող **Հաց ախպուրի** պատմությունը⁷: Այն սկզբում կոչվել է Թարխան աղբյուր՝ բխեցնողի՝ որսկան Թարխանի անունով: Հերթական անգամ, երբ որսկանը ցան-

¹ Նույն տեղը, էջ 57:

² Ա.Բաբախանյան, Ուխտավորի հիշատակարանը, 1885, էջ 83: Ա.Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, 1981, էջ 57:

³ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, 1991, էջ 90:

⁴ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 61:

⁵ Նույն տեղը:

⁶ Մ.Առաքելյան, Ռ.Ղաիրամանյան, Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, 1978, էջ 141:

⁷ Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 152:

կանում է հագեցնել ծարավը, մի ագռավ մի քանի անգամ իրեն նետում է աղբյուրի ակը՝ պղտորելով ջուրը: Ջայրացած որսկանը կրակում ու սպանում է ագռավին և հետո միայն նկատում, որ օձը թույնը թափել է ջրի մեջ: Խիստ զղջալով արածի համար՝ Թարխանը ճաշկերույթի է հրավիրում համազյուղացիներին և, պատմելով իր երախտամոռության (նամարդության) մասին, խնդրում՝ աղբյուրի անունը փոխել և դնել **Նամարդի ծուր**: Աղբյուրը ստանում է երկու անուն՝ **Թարխան ախպուր** և **Նամարդի ծուր**: Հետո ավելանում է նաև երրորդ անունը՝ **Հաց ախպուր**՝ Կաղարծիից Հացի գյուղ տանող ճանապարհին գտնվելու պատճառով:

Որոշ ավանդություններ են պահպանվել նաև այլ ջրերի մասին:

Բալուջա գյուղի գետը կոչվում է **Սըրդակէտ**, քանի որ մեղուները բույն էին դրել նրա ափի մեծ ծառի վրա, որտեղից մեղրը հոսում էր և լցվում գետը¹:

Սգնեք գյուղի մոտ գտնվող լճակում խեղդվել է մի ջահել աղջիկ: Սգավոր մայրը անիծել է, որի հետևանքով ջուրը սևացել և ստացել է **Սըվ ծով** անունը²:

Հուզիչ է Թարթառի հովտում եղած **Էշի արխի** մասին եղած ավանդությունը. գեղեցկուհին պայման է դնում իրեն սիրո առաջարկությամբ դիմած երկու երիտասարդների առաջ. կամուսնանա նրա հետ, ով առաջինը կկարողանա ջուր հասցնել մինչև իր հոր պալատը: Ջիվանշիրի մեղիքի որդին, տեսնելով, որ հակառակորդը՝ Խաչենի մեղիքի որդին, աշխատանքն արդեն ավարտում է, դիմում է խարդախության. Թարթառ գետից մինչև աղջկա հոր բերդը կտավ է մեկնում, որը, արևի տակ փայլելով, հեռվից հոսող ջրի տպավորություն է թողնում: Տեսնելով «հոսող ջուրը»՝ Խաչենի մեղիքի որդին հանկարծամահ է լինում: Ժողովուրդը խաբված երիտասարդին կոչում է էշ, իսկ առում՝ **Էշի արխ**³:

Արցախում յուրահատուկ է նաև բույսերի և կենդանիների պաշտամունքը: Ծառապաշտության մեջ նախապատվությունը տրվում է պրըռչնի (բռնչենի) ծառին, որին կարելի է հանդիպել կալատեղերում, գերեզմանոցներում, սրբավայրերում: Հատկապես պաշտվում են այս վերջինները, քանի որ ժողովրդի մտածողությամբ Աստծու զորությունը տված է սրբերին և նրանց մոտ գտնվող ծառերին: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ու սրբավայր ունի նման ծառեր, որոնց հանդեպ խոր հավատով են լցված բոլոր բնակիչները: Մեծ մեղք է համարվում սրբազան ծառերը կամ

¹ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 59:

² Նույն տեղը, էջ 61:

³ Մ.Գրիգորյան-Սպանդարյան, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, 1971, էջ 337:

նույնիսկ նրանց փոքր ճյուղերը կտրելը. հանդգնողը ժողովրդի դատողությանը անպայման պատժվում է:

Հաղորդի շրջանի Պլեթանց գյուղի եկեղեցու բակի մեծ պռչնենու մասին ասում են, որ մի անգամ գյուղի պատանիներից մեկը համարձակվել է բարձրանալ ծառը և պարսատիկի համար երկճյուղ կտրել: Սակայն իջնելուց ընկել է ժայռի վրա և իսկույն մահացել: Հետագայում մահացել են նաև նրա եղբայրները և քույրերը: Պատահական չէ, որ մինչև հիմա ոչ ոք չի համարձակվում օգտագործել անգամ ծառի չորացած և թափված ճյուղերը, դրանցով միայն մատաղ են եփում, կամ ծերունիները աչքի ուլունքներ են պատրաստում նորածինների համար¹:

Նույն գյուղի մեկ այլ սրբավայրի՝ *Նրհատակի* մասին պատմում են, որ գյուղի՝ զավակ չունեցող բնակիչներից մեկը Աստծու պատվերով մի գերեզմանաքար է տանում և կանգնեցնում այդտեղի թքեռնի սուրբ ծառի տակ, և ինը ամիս հետո նրա ընտանիքում տղա է ծնվում: Մի գյուղացի՝ համագյուղացիների բնորոշմամբ խելքը հացի հետ կերած մի հայ, անտեսելով պաշտամունքը, սուրբ ծառի՝ կայծակից չորացած և ընկած ճյուղը կտրտում և օգտագործում է տան կարիքների համար, որի պատճառով էլ նրա աջ ձեռքը չորանում է²:

Բացի պռչնուց և թքեռնուց պաշտվում են նաև կաղնին, սոսին, ճապկին, ընկուզենին, տանձենին և այլ ծառեր: Այդ ծառերի տակ մատաղ են անում, մորթված անասունի կամ աքլորի գլուխն ու ոտքերը դնում ծառի փչակում, մոմ վառում, թաշկինակ կամ հագուստի մի կտոր կապում ծառի ճյուղին և վերադառնում: Նման ծառերը չորանալուց հետո էլ մնում են՝ որպես պաշտամունքի առարկա: Դրանց փտած ճյուղերի փոշին, որ կոչվում է *խընօթուն*, ջրի մեջ լուծում և խմում են հիվանդություններից զերծ մնալու համար:

Ավանդություններ կան նաև սովորական բույսերի մասին: Ըստ դրանց՝ բամբակը բուսել է կավի մնացորդներից, որից աստված կերտել է մարդուն, խաղողը առաջացել է Նոյ նահապետի մատուցած զոհի ոսկորներից³:

Հետաքրքրական է խաղողի վազի մասին եղած պատմությունը. ժամանակին խաղողի որթը մի սիրուն, ուղիղ ճյուղերով թուփ է եղել, որի պտուղներից առաջին անգամ գինի ստանալով՝ մարդիկ խմել են և հարբելով խաղողի ճյուղերը ծուռումուռ կապկպել, որից և վազը ստացել է ներկայիս տեսքը⁴:

¹ Ա.Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 48:

² Նույն տեղը:

³ Ե. Լալայան, *նշվ. աշխ.*, էջ 203:

⁴ Ա.Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 62:

Թթենին ու թզենին աճել են մի կնոջ կրծքերից, որը մեռնելիս պատվիրել է Աստուծուն՝ տիրություն անել իր մանուկներին: Աստված մոր կաթը թուփ ու թուփ է դարձրել, երեխաները սնվել ու մեծացել են¹:

Հասկը ժամանակին բերքառատ է եղել՝ ամբողջ ցողունը պատած հատիկներով: Մի կին հանդգնել է հացի լավաշով սրբել երեխայի կեղտը, Աստված զայրացել և հասկից թողել է միայն ցողունը: Բայց, խղճալով սովից ոռնացող շներին, թույլատրել է հասկին քիչ բերք տալ²:

Թռչուններից ամենից տարածվածը ծիծեռնակի պաշտամունքն է, որի մասին եղած ավանդությունները այժմ էլ տարածված են տարբեր գյուղերում: Մի պատմության համաձայն՝ օձը պատվիրում է լվին՝ խայթել բոլոր կաթնասուններին և տեղեկացնել, թե որի արյունն է ամենաքաղցրը: Ծիծեռնակը, իմանալով, որ լուն ամենաքաղցրը մարդու արյունն է համարել և պատրաստվում է այդ մասին հայտնել օձին, կտցում և պոկում է լվի լեզուն: Օձն էլ փորձում է խայթել ծիծեռնակին, բայց հասցնում է միայն պոչի մեջտեղից կծել, որի պատճառով էլ ծիծեռնակի պոչը մնում է մկրատած³:

Մի այլ ավանդություն վկայում է, որ ժամանակին մի խորթ մայր, կեղծ հիվանդանալով, պատվիրել է անուսնուն կտրել երեխայի ճկույթը, եփել և բերել իրեն: Պահանջը կատարելուց հետո ճկույթը ծիծեռնակ է դարձել և թռել⁴:

Մեծ մեղք է համարվում ծիծեռնակին սպանելը, անգամ նրա բույնը քանդելը, թեկուզ այն լինի տան մեջ կամ նույնիսկ օջախի գլխին: Ժողովրդի կարծիքով ծիծեռնակի բույնը քանդողի տունը անպայման կավերվի:

Ավանդություններ են պահպանվել նաև այլ թռչունների մասին: Ագռավի մասին ասում են, որ մի անգամ, տեսնելով, որ ուխտագնացության եկածների մատաղի կաթսայի մեջ օձ է մտել, չի կարողանում հասկացնել հավաքվածներին և ստիպված իրեն նետում է թունավորված կաթսան՝ փրկելով մարդկանց⁵: Մի այլ պատմության համաձայն՝ ագռավը ժամանակին մի վատ կին է եղել, որը կաշառվելով մահացած քրոջ աղջկան հանձնում է թագավորի մարդկանց, որ դնեն կառուցվող բերդի պատի մեջ, որպեսզի այն չփլվի: Մահացող աղջիկը վերջին շնչում անիծում է մորաքրոջը, և վերջինս դառնում է սև ագռավ: Ասում են՝ մինչև

¹ Լ. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 80:

² Ա. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 62:

³ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան, *նշվ. աշխ.*, էջ 137:

⁴ Ա. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 62:

⁵ Նույն տեղը, էջ 67:

հիմա էլ ազռավը պատ տեսնելիս կանգնում է վրան և փորձում կտուցով քանդել. իբր գիտակցել է սխալը և ցանկանում է հանել քրոջ աղջկան¹:

Սողուններից պաշտվում է լորտուն (լօկը): Ժողովրդի հավաստմամբ լորտուն հայ է, իսկ օձը՝ թուրք: Պատահական չէ, որ լորտուն միշտ սպանում է հանդիպած օձին, որպեսզի վերջինս հայերին չխայթի:

Պաշտվում է նաև տան օձը, որը համարվում է *ղօվաթ* (հաջողություն բերող): Իշխում է այն կարծիքը, որ, եթե շահմար օձը մեկի բերանում թքի, վերջինս իմաստուն կդառնա: Նման պատվի արժանացել է *Օվջի Փիրունը*²:

Օձերը տարին մեկ փոխում են իրենց շապիկը (հալավը): Այդ շապիկը մարդիկ դնում են հացի մեջ և ուտեցնում երեխաներին, որ ձեռքերի գորտնուկը անցնի, կամ պահում են գլխարկների մեջ, որ ուրիշ օձեր չնոտենան:

Կաթնասուններից կատվի մասին ասում են, որ նա Քրիստոսի թաշկինակն է: Իբր մի անգամ Հիսուսը հյուրընկալվել է մի տան և, տեսնելով, որ մկները խանգարում են ճաշել, հանել է թաշկինակը, խաչակնքել և արձակել: Այն իսկույն կատու է դարձել և հալածել մկներին³: Կատուն համարվում է սուրբ, նրան սպանելը՝ մեծ մեղք. իզուր չեն ասում.

- *Հու վեր մին կատու ըսպանե, բեղմա օխտը յըխծե շինի, հանցու մեխկա միզվի:*

Հայ ժողովրդական հավատալիքներում զգալի տեղ ունի արջի և գայլի պաշտամունքը, որի մնացուկները գոյատևում են Արցախում:

Մի ավանդության համաձայն՝ արջը ժամանակին ազահ ջրաղացպան է եղել: Մի անգամ նա գողացել է բազմազավակ որբևայրու ալյուրի մի մասը և վերջինիս անեծքով դարձել արջ⁴: Հուզիչ պատմություն է Պըտկես պէրք եկեղեցու բակում թաղված արջի մասին եղած ավանդությունը: Երեխտապարտ արջը կանոպին գնում է վանք և օգնում իր վերքը բուժած տերտերին՝ եկեղեցու կառուցման համար քարեր կրելով: Հերթական անգամ հեռվից քար բերելով՝ նա իր փրկիչին մեռած է գտնում և, վշտից գլուխը խփելով հանգուցյալի տապանաքարին, ինքնասպան լինում: Արջին թաղում են եկեղեցու բակում, որը և դառնում է սրբատեղի: Չբեր կանայք չոքեչոք պտտվում են արջի գերեզմանաքարի շուրջը, Աստված ասում է՝ պըտկըվիս, չըպէրք, և նրանք պտղավորվում են: Այստեղից էլ ժողովրդի ստուգաբանությամբ առաջացել է վանքի անունը⁵: Նմանատիպ

¹ Նույն տեղը:

² Նույն տեղը, էջ 76:

³ Նույն տեղը, էջ 72:

⁴ Նույն տեղը:

⁵ Նույն տեղը, էջ 54:

մի գերեզման էլ կա Խանաբադ գյուղի մերձակայքում՝ Նրիատակ տեղամասում: Ասում են՝ այստեղ մի գայլ է թաղված, որը սնել և պաշտպանել է գաղթի ժամանակ մորը կորցրած մի մանկան¹:

Էջի մասին ասում են, որ անհավատ է եղել, գնացել է Աստծու մոտ և, ընդունելություն չգտնելով, ստիպված դիմել է կայծակին: Վերջինս էլ խփել և կտրել է ազից²: Մի այլ ավանդություն ներկայացնում է եզան և էջի հավատարմությունը. խեղճ աղամա որդին խնդրում է կենդանիներին՝ օգնել իրեն: Միայն էջն ու եզն են մոտենում նրան և ընկերանում: Այդ օրվանից մարդը իր հավատարիմ ընկերներով կռվում է քարի ու հողի հետ³:

Երկնային լուսատուներից պաշտվում են հատկապես արևն ու լուսինը: Գիշտ է՝ դրանց առաջ այլևս ծունր չեն իջնում և չեն աղոթում, ինչպես առաջներում, բայց շարունակում են դրանցով երդվել.

- Էն արը՛վը, թա էտ պենը ըրած ինիմ, էն լուսնինգ՛ան ինձ քուռըցընէ, թա սը՛տ ինիմ:

Ծեր կանայք երբեմն դիմում են այդ լուսատուներին՝ խնդրելով պահապան լինել իրենց հարազատներին:

Ասում են՝ արևը մի վախկոտ և անաչկոտ աղջիկ է եղել. գիշերը վախեցել է շրջել, ցերեկը՝ ամաչել: Մայրը ստիպված տվել է մի փունջ ասեղ, որ իրեն նայողների աչքերը խոցի: Մինչև հիմա էլ արևը, նստած մի առյուծի մեջքի, ձեռքին ասեղների փունջը, շրջում է երկնքում: Երբեմն քաջքերը հարձակվում են, որ գողանան աղջկան: Արևը տխրում և խավարում է, որի պատճառով առյուծը հարձակվում և հաղթում է քաջքերին, իսկ մարդիկ ներքևից հարայ-հրոց են բարձրացնում, հրացան կրակում և ազատում աղջկան⁴: Պատմում են նաև, որ չարաճճի լուսինը մի անգամ խանգարել է մորը խմոր հունցելիս, մայրը խմորուտ ձեռքով ապտակել է նրա երեսին, և այդ հետքերը մինչև հիմա մնում են⁵:

Աստղերի մասին ասում են, որ դրանցից յուրաքանչյուրը լույս աշխարհ է գալիս մի մարդու ծննդյան հետ և մեռնում (ծըլլում) նրա մահվան ժամանակ: Մեծ մարդկանց աստղերը մեծ են, փոքրերինը՝ փոքր, նամուսով մարդկանց աստղերը պարզ են, անմամուսներինը՝ աղոտ⁶:

Ավանդություններ կան նաև Հարդագողի ճանապարհի, կայծակի, անձրևի, որոտի, գիշերվա ու ցերեկվա, օրվա, երկրաշարժի մասին:

¹ Նույն տեղը:

² Լ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 79:

³ Նույն տեղը, էջ 72:

⁴ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 15:

⁵ Նույն տեղը:

⁶ Նույն տեղը:

Մի շարք ավանդություններում արտացոլվում է քրիստոնեական կրոնի և հատկապես Քրիստոսի հանդեպ ունեցած մեծ հավատը. կռապաշտների զորավարը, տեսնելով սպանված քրիստոնյա գեղեցկուհու վրա երկնքից իջած լույսը, իր զինվորների հետ ընդունում է նրա կրոնը¹, թուրք քույր և եղբայր, զարմանքով նկատելով օդի մեջ կանգնած և աղոթող վարդապետին, ուրանում են հարազատ կրոնը՝ դառնալով քրիստոնյա, որի պատճառով էլ հետապնդվում են թուրքերի կողմից և սպանվում², ամուլ արաբ կինը ուխտի է գալիս հայկական վանքը և, զավակ ունենալով, մկրտվում ու դառնում քրիստոնյա, և երբ արաբները ուզում են սպանել կնոջն ու երեխային, Քրիստոսի հրամանով օծերը խայթում են նրանց և ազատում մորն ու մանկանը³, հովիվը, հրաժարվելով Քրիստոսին կաթ տալուց, նրա անեծքով իր հոտի հետ քարանում է⁴, Քրիստոսը զայրանալով անիծում է ջրում, և վերջինս զրկվում է պտղաբերելու հնարավորությունից⁵:

Արցախյան ավանդություններում մեծ արձագանք են գտել նաև ժողովրդի ներքին կյանքը՝ զբաղմունքը, կենցաղը, հասարակական հարաբերությունները: Ջբաղմունքներից հատկապես արտացոլվել են երկրագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, այգեգործությունը, որսորդությունը, որոնք կենսական մեծ նշանակություն ունեն արցախցու կյանքում: Կենցաղային ավանդությունների մեջ տեղ են գտել մի շարք սովորույթներ, հարաբերություններ, ծեսեր, ինչպիսիք են՝ աղբյուրը ջրի գնալու սովորույթը, հարսի հարաբերությունները կեսուրի, կեսրայրի և ամուսնու մյուս հարազատների հետ, ժողովրդի մեջ կատարվող արարողությունները և այլն: Իրենց քանակով և բովանդակությամբ նշանակալից են սիրո և ամուսնության մասին եղած ստեղծագործությունները, որտեղ արտացոլվում են կնոջ իրավագուրկ և ճնշված վիճակը, երիտասարդ տղաների և աղջիկների կախվածությունը ծնողներից և բազմաթիվ այլ հանգամանքներ: Դարեր շարունակ ազատ սիրուն և ամուսնությանը խոչընդոտել են սիրող զույգերի սոցիալական տարբեր ծագումն ու հասարակական դիրքը, ընչքային դրությունը՝ ստիպելով սիրահարներին գաղտնի հեռանալ հայրենի օջախներից, ինչը և հաճախ ոճրագործությունների և ողբերգությունների տեղիք է տվել: Այսպես. Դիզակի Բայանդուր իշխանը, իմանալով, որ իր գեղեցկուհի դուստրը՝

¹ Նույն տեղը, էջ 36:

² Ե. Լալայան, *Նշվ. աշխ.*, էջ 224:

³ Մ. Բարխուդարյան, *Արցախ, 1885*, էջ 414:

⁴ Ա. Սարգսյան, *Նշվ. աշխ.*, էջ 45:

⁵ Նույն տեղը, էջ 72:

Վարդիթերը, սիրահարված է հովիվ Արսենին և որոշել է փախչել նրա հետ, կրակում և սպանում է երկուսին էլ¹, Վանք գյուղի բեկի աղջիկը՝ Յուռունը, անտեսելով հոր կամքը, փախչում է սիրած տղայի հետ և բնակվում գյուղից հեռու՝ անմարդաբնակ մի վայրում, որտեղ և հոշոտվում է գազանների կողմից: Հետագայում այդ վայրում գյուղ է հաստատվում, որն էլ Յուռունի հիշատակին կոչվում է **Յուռունեն քաղ**, իսկ հետո՝ **Յուռաքաղ**²: Սակայն միշտ չեն ծնողները պարտադրում իրենց կամքը զավակներին, երբեմն նրանք տեղի են տալիս՝ հարգելով անկեղծ զգացմունքները: Մի ավանդության համաձայն՝ Դիզակի մելիք Սաջունը չի ընդդիմանում իր մինուճար աղջկա՝ Գայանեի սիրուն և նրան ամուսնացնում է ծառա Գագիկի հետ՝ մելիքությունը կտակելով վերջինիս: Նարեշտար գյուղի անունը ստուգաբանող ավանդության մեջ քուրդ բեկի մինուճար աղջիկը, հակառակ հոր կամքին, փախչում և ամուսնանում է իրենց տան հայ ծառա Առստամի հետ: Հետագայում հայրը ներում է աղջկան՝ տալով մեծ օժիտ և ծառաներ³: Սրտառուչ մի պատմություն է Մեծ Թաղլար և Տող գյուղերի խաչմերուկում գտնվող **Արզուման վանքի** մասին եղած ավանդությունը. ռուս զինվորները իրենց հետ Ռուսաստան են տանում կռվի ժամանակ մորը կորցրած մի հայ մանկան՝ Արզուման անունով, որը, կրթություն ստանալով և մեծ հարգանքի արժանանալով, դառնում է գեներալ: Վերադառնալով Շուշի՝ նա ամուսնանում է իրենից տարիքով մեծ մի հայ կնոջ հետ: Մի օր էլ ամուսնու ոտքերը լվանալիս կինը տեսնում է նրա ոտքի նշանը և հեծկլտալով ուշաթափվում. պարզվում է՝ ամուսինները մայր և որդի են, որոնք տարիներ առաջ կորցրել են իրար: Խոր հիասթափություն ապրելով՝ նրանք այդ ամենը պատմում են տերտերին, որն էլ խորհուրդ է տալիս մեղքերը քավելու համար մի եկեղեցի կառուցել և մեջը աղոթել, ինչը և սիրով կատարում են⁴: Նման դեպք է կապված Տունի գյուղի մերձակայքում՝ **Իքակ** գետի վրա, գտնվող կամուրջի կառուցման հետ. քույր ու եղբայր, մանկուց իրար կորցնելով, օտարության մեջ հանդիպում են և, անտեղյակ իրականությանը, ամուսնանում: Տարիներ հետո, պառավ կնոջից իմանալով եղելությունը, նրանք դիմում են Գտիչ վանքի տերտերին՝ մեծ մեղքը քավելու խնդրանքով, և նրա խորհրդով մի թանկարժեք նվեր-հիշատակ են թողնում հայրենի գյուղի ժողովրդին. կառուցում են այդ կամուրջը⁵:

¹ Մ. Գրիգորյան-Սպանդարյան, *նշվ. աշխ.* էջ 338:

² Տես Ա.Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 29:

³ Նույն տեղը, էջ 31:

⁴ Նույն տեղը, էջ 49:

⁵ Նույն տեղը, էջ 38:

Մի շարք ավանդություններում արժարժվել են օտար բռնակալների՝ արաբների, պարսիկների, թուրքերի, թաթարների նվաճողական նկրտումները, կատարած ավերածություններն ու թալանը և արցախցիների անգիջում պայքարը նրանց դեմ: Ըստ ավանդության՝ Հաղրութի շրջանի գյուղերից մեկը ստացել է **Թեգխարաք** (հաճախակի փչացող) անունը, քանի որ այդ տեղով անցնող օտար բռնակալներից յուրաքանչյուրը ավերել և թալանել է այն¹: Որոշելով հիմնահատակ ավերել Ամարասի վանքը՝ Լենկ Թեմուրը հրամայում է զորքին՝ շարվել մինչև Արաքս և, վանքի քարերը ձեռքից ձեռք փոխանցելով, լցնել գետը²: Օտար բռնակալներից հատկապես հիշատակվում են Լենկ Թեմուրի, Բուղայի, Փանահ խանի, Իբրահիմ խանի անունները: Օտար բռնակալներին զուգընթաց ժողովուրդը ավանդություններում կերտել է իր հայրենասեր ու քաջարի զավակների կերպարը: Իրանի աղա Մահմադ շահի թիկնապահը՝ Սափարալիբեգ՝ը, տեսնելով, թե ինչպես են պարսիկները Շուշիում հայերին կոտորում, անպատվում և գազանաբար սպանում հղի կանանց, այլևս չի համբերում և գիշերը սպանում է շահին՝ ինքն էլ նահատակվելով: Հետո պարզվում է, որ վրիժառուն ազգությամբ հայ է, որը մանուկ հասակում գերի է տարվել Պարսկաստան և դաստիարակվել պարսկական ոգով³: Սակայն, ականատես լինելով հայրենակիցների նախճիրին, նրա մեջ արթնացել է հայ քրիստոնյայի ոգին, ինչպես արցախցիներն են ասում՝ **արունը ծիք՝ ա տըվալ**: Հակոբ անունով մի մանուկ Ասկերանի շրջանի գյուղերից մեկից գերի է տարվում Իրան և որդեգրվում Ամիրխան անունով մի մեծավորի կողմից՝ ընդունելով պարսկական կրոնը և մկրտվելով **Փառուխ** անվամբ: Հետագայում նա մեծ հարգանք է վայելում Իրանի շահի կողմից և նշանակվում բարձր պաշտոնի: Բայց երիտասարդը ոչ մի կերպ չի կարողանում մոռանալ իր ծնողներին, հայրենի բնությունը և մի օր էլ, թողնելով ամեն ինչ, ծածուկ փախչում է հաստատվելով Շուշի քաղաքում, որտեղ կարճ ժամանակում ձեռք է բերում մեծ հեղինակություն: Ահա թե ինչու ժողովուրդը նրա անվամբ է կոչում հայրենի գյուղը⁴:

Արցախցին առանձնապես վրիժառու է դառնում, երբ փորձում են պղծել նրա սուրբ զգացմունքները: Նման մի հուզիչ պատմություն է ներկայացնում ճարտար և Սոս գյուղերի մոտակայքում գտնվող **Ղիշա վանքի** մասին եղած ավանդությունը. օտար բռնակալ խօշանբագ՝ը, չբավարարվելով կատարած ավերածություններով և կողոպուտով, օրենք է սահ-

¹ Նույն տեղը, էջ 18:

² Ա.Բաբախանյան, *Նշվ. աշխ.*, էջ 9:

³ Ա. Ղազիյան, *Նշվ. աշխ.*, էջ 154:

⁴ Մ.Գրիգորյան-Սպանդարյան, *Նշվ.աշխ.*, էջ 335:

մանում, որի համաձայն՝ իրեն է վերապահվում յուրաքանչյուր նոր ամուսնացող աղջկա հետ առաջին գիշերն անցկացնելու իրավունքը: Կտրիճ երիտասարդ Եղիշեն՝ ժողովրդի հավաստմամբ Գրիգոր Լուսավորչի թոռը, չկարողանալով տանել նման անպատվությունը, հարսի շորերով ներկայանում է բեկին և գիշերը խողխողում նրան՝ ինքն էլ նահատակվելով հետագայում իր անունը կրող վանքի տեղում¹:

Առանձնակի շարքով են ներկայանում թևան Ստեփանյանի մասին պատմվող ավանդազրույցները: Նշանավոր հայդուկապետը իր ամբողջ կյանքը նվիրել է արտաքին և ներքին թշնամիների դեմ մղվող պայքարին: Մի ավանդության մեջ իր փոքրաթիվ քաջերով նա հաղթում է թուրքական զորքին՝ կանխելով արյունահեղությունն ու թալանը², մի այլ դեպքում գնդակահարում է հայ կնոջ պատվի հանդեպ ոտնձգություն կատարած իր զինվորին³, մի ուրիշ դեպքում ծեծում է հայ գյուղացուն, որը համարձակվել է գովել սպանված թուրքի արտաքին գեղեցկությունը⁴:

-Լ'ա՛վ գ'իդացէք՛, թորքը հի՛նչ էլ ի՛նի, հային վը՛տանը տակէ ցը՛խըն էլ չարժի, - այսպես է խրատում ազգային հերոսը իր հայրենակիցներին:

Նման վարքաբանական ավանդություններ կան Թյուլի-Արզունանի⁵, Յոթ Երանելու⁶, Խրիմյան հայրիկի⁷, Վանի Յուզբաշու⁸ և այլոց մասին:

Սակայն միշտ չէ, որ արցախցին կարողացել է զինված պայքար մղել թշնամու դեմ. երբեմն նա բռնակալներին հակադրվել է իր ստեղծագործ և շինարար ոգով՝ ապավինելով Աստծո և սրբերի զորությանը: Մի ավանդության մեջ պատմվում է, թե ինչպես Լենկ Թեմուրը, խղճի խայթ զգալով, թույլատրում է չկտորել այնքան հայ, որքան կտեղավորի տեղի եկեղեցին: Մարդիկ, մտնելով եկեղեցին, գաղտնի ետնադռնով փախչում են անտառը և ազատվում⁹: Չկարողանալով գրավել Գոխչ բերդը՝ արաբ զորավար Բուղան ավերում է հայկական սրբավայրերը: Նույն ժամանակ՝ կռվի թեժ պահին, հայերը կառուցում են նոր եկեղեցի՝ նրան տալով *Թիժ յը՛խցտ* անունը¹⁰: Պողոսա Գոմեր գյուղում ժամանակին մի մեծ փոս է եղել, որտեղ թշնամիների հարձակումների ժամանակ թաքնվում էին կանայք ու երեխաները և փրկվում: Հետագայում, երբ խաղաղություն է տիրում,

¹ Ա.Սարգսյան, *Նշվ. աշխ.*, էջ 50:

² Նույն տեղը, էջ 76:

³ Նույն տեղը, էջ 75:

⁴ Նույն տեղը:

⁵ Բաֆֆի, *Խամսայի մելիքությունները*, 1895, էջ 126:

⁶ Ա. Ղանալանյան, *Նշվ. աշխ.*, էջ 348:

⁷ Ղազիյան, *Նշվ. աշխ.*, էջ 147:

⁸ Ա. Ղազիյան, *Ռուս-պարսկական պատերազմների արձագանքները հայ բանահյուսության մեջ*, Պատմաբանասիրական հանդես, N3, 1978, էջ 114:

⁹ Ա.Սարգսյան, *Նշվ. աշխ.*, էջ 52:

¹⁰ Նույն տեղը, էջ 49:

ժողովուրդը ամենքին փրկող այդ փոսի տեղում եկեղեցի է կառուցում՝ այն անվանելով *Ամենափրկիչ*¹:

Վերոհիշյալ ազգային ավանդությունների կողքին տեղ են գտել նաև միջազգային և եկամուտ որոշ ստեղծագործություններ: Միջազգային ավանդություններից, որոնք իրենց զուգահեռներն ու տարբերակներն ունեն մի շարք ժողովուրդների մոտ, Արցախում լայն տարածում ունի համաշխարհային ջրհեղեղի մասին եղած պատմությունը, որի համաձայն՝ Նոյ նահապետը, կանխազգալով գալիք մեծ ջրհեղեղը, շինում է մի տապան և իր ընտանիքով ու կենդանիներով տեղավորվում նրա մեջ²: Նման բնույթ ունի նաև տարբեր շինվածքների փլուզումը կանխելու նպատակով շինվածքի մեջ կենդանի վիճակում մարդ թաղելու պատմությունը³:

Եկամուտ ավանդությունները փոխառություններ են հայ ժողովրդի հետ պատմական այս կամ այն դարաշրջանում տարբեր շփումների մեջ գտնվող ցեղերի ու ազգերի բանահյուսությունից: Դրանցից են աստվածաշնչյան տարբեր ժողովրդական ավանդություններ, Խիկար Իմաստունու, Լողմանու, Լենկ-Թեմուրի մասին պատմող որոշ պատմություններ, որոնց մի մասը, ժամանակի ընթացքում վերամշակվելով, տեղայնացվել և ձուլվել է ազգային ավանդություններին:

Եվ այսպես հարատևում են արցախյան ավանդությունները՝ որպես հարազատ ժողովրդի հազարամյակների պատմության խոսուն փաստեր, նրա ինքնության ու անաղարտության լիարժեք վկաներ:

Резюме

В статье исследуются жанровые и смысловые особенности одного из важнейших жанров Арцахского устного народного творчества – легенды. Исследуются их разновидности и приводится история их публикаций.

Summary

This article is about genre and meaning peculiarities of one of the most important genre of Artsakh folklore-legends. Their varieties is examining and the history of publication is presenting.

¹ Նույն տեղը, էջ 51:

² Նույն տեղը, էջ 16:

³ Նույն տեղը, էջ 67: